ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿՑԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

ՄԱՐԴՈ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Մեր ձեռքի տակ է մի աշխատություն, տպագրված Փարիզում 1947 թ.։ Նրա հեղինակը մեմուարային այդ երկում առանձին բաժին է նվիրել Ալեքսանդր Ծատուրյանին։ Այս նոր հուշերը, որոնց հետ ուզում ենք ծանոթացնել մեր ընթերցողներին, հաստատում են Ծատուրյան-բանաստեղծի մասին արդեն հայտնված կարծիքները, ուրվագծում նրա կյանքի վաղ շրջանի՝ մեզ քիչ ծանոթ ճանապարհը և բազմաթիվ նորություններ ավելացնում այն ամենին, ինչը հայտնի է գրական մեր ազնիվ մշակներից մեկի՝ Ծատուրյանի մասին։

Ծատուրյանին նվիրված հուշագրության հեղինակն անցյալ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ լրագրող և մտավորական Պետրոս Տոնապետյանն է. 1885—1892 թթ. նա ապրում էր Պոլսում և Վաղինակ գրական կեղծանունով աշխատակցում էր «Արձագանքին»՝ իբրև այս թերթի սեփական թղթակից։

1892-ի սկզբին նա ձերբակալվում է թուրքական ոստիկանության կողմից, և սուլթան Համիդի վրա ռումբ նետելու մեղադրանքով աքսորվում է Աքիա (Պաղեստին)։ 1896-ին Տոնապետյանը փախչում է աքսորավայրից և բնակություն հաստատում Լոնդոնում։ Եղել է Լինչի անձնական բարեկամը, հայերենի է փոխադրել նրա հանրածանոթ «Արմենիան»։ Լոնդոնից մի քանի անգամ նա եկել է Ռուսաստան և Անդրկովկաս։ Վերջին անգամ Հայաստան է այցելել 1932 թ. և ծանոթանալով Երևանի թանգարանի հետ, վերադարձից հետո Հայաստան է ուղարկել մեծարժեք գրքերի մի հարուստ հավաքածու։ Լոնդոնում Տոնապետյանն զբաղվում էր գրական աշխատանքով. հրատարակել է մի շարք գրքեր և բրոշյուրներ, որոնցից հիշատակության արժանի են «Ձայն տառապելոց», «Արմենիա» Լինչի գրքերը, «Հայաստան և հայ ժողովուրդը դարերի միջով» մեմուարների առաջին հատորը[1]*։*

Ալեքսանդր Ծատուրյանի մասին հուշեր գրելու հանձնարարությունը Տոնապետյանն ստացել է գրականագետ Խորեն Սարգսյանից, որի հետ ծանոթացել, ապա և նամակագրական կապ է հաստատել 1932-ից, երբ գրականագետն աշխատում էր Խորհրդային Հայաստանի թանգարանում՝ որպես դիրեկտոր։

Նամակներից մեկում Սարգսյանը, ի դեպ, հարցնում է. «Ալեքսանդր Ծատուրյանի արխիվը այժմ Խորհրդային Հայաստանի թանգարանումն է։ Նրանում գտանք Ձեր լուսանկարը։ Ի՞նչ կապ է եղել Ձեր և մեր բանաստեղծի մեջ։ Խնդրեմ գրեցեք ինձ։ Այս հարցը մեզ չափազանց հետաքրքրում է»։ Հավանաբար ստանալով Տոնապետյանի՝ մեզ անհայտ պատասխան նամակը, Սար-

---

[1] *Տոնապետյանի մասին ավելի հանգամանորեն տե՛ս Մ. Մխիթարյան, «Մի էջ հայ լրագրության պատմությունից» («Բանբեր Երևանի համալսարանի», 1972, № 1)։*

գրությանը նրան խնդրում է գրել իր հուշերը բանաստեղծի մասին։ Այդ առաջարկը հուզում է Տոնապետյանին և նա ձեռնամուխ է լինում կատարել այդ սրտամոտ հանձնարարությունը («Ձեր թախանձագին ցանկությունը եղավ, որ Ձեր թանգարանի համար գրեի այս անբախտ և բախտավոր անհետացյալի կյանքի մասին։ Կատարելապես սրտակից իմ ցանկության հետ»)։ Տոնապետյանը 1934-ին գրում է իր հուշերը Ծատուրյանի մասին, բայց ժամանակին այն չի ուղարկում Երևան՝ «լավագույնը գրելու փափագով, որ չիրականացավ և թերացա գրածս ղրկելու մեջ»։ Խ. Սարգսյանի հանձնարարությունից 15 տարի անց, 1947 թ. Տոնապետյանը հրատարակում է իր մեմուարների առաջին հատորը, որտեղ և զետեղում է Ալ. Ծատուրյանին նվիրված գլուխը՝ «Ալեքսանդր Ծատուրյան —ազատության զինագործները» խորագրով»[2]։

Տոնապետյանի առաջին ծանոթությունը Ալ. Ծատուրյանի հետ տեղի է ունեցել 1883 թ. գարնանը, Թիֆլիսում։ Այդ օրերին վտարված լինելով Գեվորգյան ճեմարանից, Տոնապետյանը ընկերների խորհրդով մեկնում է Թիֆլիս, ծանոթանալու երևանցի Գալուստ Ալոյանի հետ, որը նրան պետք է օգներ առաջին քայլերում։ Ալոյանը մեկն էր այն մտավորականներից, որոնը խանդավառված էին Արևմտյան Հայաստանն ազատագրելու ծրագրով։ Բաֆֆու վեպերի և Պատկանյանի բանաստեղծությունների ներգործությամբ Գ. Ալոյանը թողել էր գիմնազիան և որոշել ուսումնասիրել զինագործությունն ու նվիրվել արևմտահայության ազատագրման գործին։ Նա իր շուրջն է համախմբում մի քանի երիտասարդների, որոնց մեջ էին և Տոնապետյանն ու Ծատուրյանը։ Ալոյանի հայրենասիրական քարոզները ոգևորում են պատանիներին։ «Ծատուրը» և ես ուխտեցինք հետևել նորա քայլերին և նորա հետ միասին սովորել զինագործություն։ Իբրև նախաքայլ այդ նպատակին, մտանք Թիֆլիսի արհեստագիտական դպրոցը, երկաթը ձևակերտելու արհեստին մեջ վարժվելու համար»[3]։ Նրանց օրինակին են հետևում Միքայել Հովհաննիսյանը (ապագա Նար-Դոսը) —«մի լռիկ-մնջիկ քմծիծաղով տղա», բանաստեղծ Սրինգը (Արշ. Մեհրաբյան) և ուրիշներ։ Առանձնակի մտերմությամբ կապվում են Ալոյանը, Ծատուրյանը և Տոնապետյանը։

Մեմուարների հեղինակը հիշում է առաջին դասը, երբ «գաղափարի ոգին» նրանց ներշնչում է «հոգեցունց ոգևորություն»։ Ռուս վարպետն իր աշակերտներին ուսուցանում է անձև երկաթը հղկելու արվեստը։ Ճիշտ է, հենց սկզբից նրանց համար պարզ է դառնում, որ հաղթահարել այդ արհեստի դժվարություններն իրենց ուժերից վեր է, բայց նրանք առանց հուսահատվելու շարունակում են գործը։ Ծատուրյանն ու Տոնապետյանը աղատ ժամերին միասին էին, իսկ շաբաթ և կիրակի օրերը ճաշում էին Ալոյանի հորեղբոր տանը։ Նրանց բաժակաճառերը զուգակցվում էին Պատկանյանի երգերով, կենացներ էին նվիրվում օրվա իդեալներ Խրիմյանին, Պատկանյանին, Արծրունուն, Բաֆֆուն։ Ծատուրյանը բոլոր խնջույքների «ձգողության կենտրոնն էր»։ Գրեթե միշտ բարեկամները նրան խնդրում էին երգել։ «Նորա ձայնը և հատուկ երգերը անհամաձայն էին մեր ուրախալից մթնոլորտին, նոքա տրխրության երգեր էին և սակայն միշտ սիրում էինք լսել։ Սեղանի վրա աղմուկը դադարում էր, զվարթ դեմքերը առնում էին լուրջ երևույթ և խոր լռության

2 Պետրոս Տոնապետյան (Վաղինակ), Հայաստան և հայ ժողովուրդը դարերի միջով, Հ. Ա, Մանկություն և պատանեկություն, Փարիզ, 1947։

3 Նույն տեղում, էջ 354։

մեջ մտիկ էինք անում նորա մելամաղձոտ ձայնին։ «Ձայն տուր, ո՞վ ծովակ. ինչո՞ւ լռում ես»-ը նորա սիրական երգն էր։ Բուռն ծափերի միջով գոչում էինք. «Կեցցես Ծատուր, շատ ապրես»։ Այդ բոպեներին նորա տկար կուրծքը կարծես ուռում էր հպարտության շունչով և երջանկությունը ճառագայթում աչքերի մեջ»[4]։

«Մշակում» տպագրվող իրարամերժ նյութերը Թուրքիայի հայության մասին, Ազգային սահմանադրության գոյության և պատրիարքարանի գործունեության փաստերը և հայերի ստրկական վիճակը հավաստող հաղորդագրությունները հակասական պատկերներ են ստեղծում Տոնապետյանի երևակայության մեջ։ Նա վճռում է թողնել զինագործություն սովորելու գաղափարը, մեկնել Պոլիս և անձամբ ծանոթանալ արևմտահայության կյանքին։ Իր որոշումը նա հայտնում է Ծատուրյանին. «Նկատեցի, որ նորա մեջ ևս հավատքը սկսել էր խախտվել և զգում էր, որ զինագործությունը յուր կոչումը չէր»։ Այդ օրերին արդեն (1884-ի գարնանը) Ծատուրյանը երազում էր ծանոթություններ հաստատել հայ և վրացի գրողների («գրագետների») հետ. «Արդեն կազմել էր մի քանի այդպիսի ծանոթություններ»։ «Մի ուրիշ անզուսպ իղձն էր թատրոնը. հաճախ ինքն իրեն խնայում էր յուր սնունդից և գնում էր տոմսակ՝ տեսնելու թատերական ներկայացումներ և երաժշտական համերգներ։ Եվ յուր հիացումը մեծ էր, երբ հետևյալ օրը պատմում էր ինձ երաժշտության կամ ողբերգության իր վրա թողած քաղցր տպավորությունը»[5]։

Տոնապետյանը Կ. Պոլսից նամակագրական կապեր է պահպանում իր բարեկամների հետ, որոնցից Ալոյանը զինագործության մեջ կատարելագործվելու համար հետագայում մեկնում է Տուլա՝ «զինագործության մայրաքաղաքը», իսկ Ալ. Ծատուրյանը՝ Մոսկվա՝ «յուր ցանկալի երևակայության նպատակակետը»։

1891 թ. դեկտեմբերին Տոնապետյանը Պոլսից գալիս է Պետերբուրգ. ճանապարհին նա կանգ է առնում Մոսկվայում, Ծատուրյանի մոտ։ Առաջին օրն իսկ նրան ճաշի է հրավիրում մեծահարուստ Իսահակ Ժամհարյանը, որի բանկային տանը ծառայում էր Ծատուրյանը։ Հրավերը զարմացնում է Տոնապետյանին («որովհետև գիտեի, որ դրամատերերը առհասարակ խելացի էին և իրենց ծանոթության արժանի էին համարում առավել կամ նվազ իրենց պես դրամի տեր եղողներին»)։ Ծատուրյանը բացատրում է, որ Ժամհարյանն իր հետ վարվում է ոչ իբրև ստորադասի, այլ իբրև հավասարի հետ։

Տոնապետյանը նոր գծեր է տեսնում Ծատուրյանի մեջ. «Գաղափարի հեղափոխության ոգին է, որ տեսնում էի Ծատուրյանի այս արտահայտությանց մեջ։ Թրքահայոց ազատության համար հեղափոխական դառնալու գաղափարը մեկդի դրած, ինձ թվում էր, թե դառել էր ընկերային դասակարգի կռվի հեղափոխական։ Հեղափոխական՝ իր տեսած կյանքի համար և իր ապրած երկրի վրա, և ոչ թե հեղափոխական իր չտեսած կյանքի և իր չապրած հողի վրա»[6]։

Հայ բանկիրի տանը զրույց է բացվում ազգայնական կուսակցությունների գործելակերպի և Արևմտյան Հայաստանի ազատագրության ստույգ երաշխիքների շուրջը։ Տոնապետյանը ծանոթացնում է իրավիճակին։ Այնուհետև

---

4 Նույն տեղում, էջ 366։
5 Նույն տեղում, էջ 368։
6 Նույն տեղում, էջ 372։

խոսում են Սմբատ Շահազիզի հոբելյանի նախապատրաստական աշխատանքների մասին. Ժամհարյանը բողոքում է այն բանից, որ հոբելյանի կազմակերպիչներն ստեղծել էին երկու կոմիտե, որոնցից մեկը դրամ էր ժողովում, իսկ բացառապես մտավորականներից կազմված կոմիտեն զբաղվում էր հոբելյանի կազմակերպական հարցերով։ Ինչո՞ւ իրենք չեն կարող մասնակցել երկրորդ կոմիտեի աշխատանքներին. չէ՞ որ բանաստեղծները ոչ միայն մտավորականներին են պատկանում, այլ նաև վաճառականներին։ «Բանաստեղծը պատկանում է մտավորականներիս,— առարկում է Ծատուրյանը,— և մեզ վերաբերում է կարգադրել և որոշել հոբելյանի հանդեսը և թե ով ինչ պիտի բանախոսե։ Դուք, դրամատերերդ, տաղանդի հետ գործ չունեք, այլ փողի հետ, ուստի ձեր դերը պետք է լինի հոբելյանական ձեռնարկի դրամականի մասին հետ»[7]։ Երբ ճանապարհին Տոնապետյանը հանդիմանում է իր բարեկամին նրա անողոքության համար, Ծատուրյանը պատասխանում է. «Չգիտես, Պետրոս, այդ դասի մարդոց բոլոր ասածները կեղծ են. դոքա ցույցի համար է, որ գրականասեր են ձևանում և ոչ թե համոզումով։ Քաշվում են մտավորականների բարոյական ուժից և նրա համար է, որ ուզում են հաճո երևիլ նրանց...»[8]։

Ծատուրյանը Տոնապետյանին ներկայացնում է Մոսկվայի հայ մտավորականության ներկայացուցիչներին, պրոֆ. Գր. Խալաթյանին, փաստաբան Ստ. Մամիկոնյանին, հրատարակիչ Մ. Բարխուդարյանին, ուսանող Մ. Բերբերյանին։ Մի քանի օր նրանք անց են կացնում միասին, լինում են զանազան ճաշկերույթների։ Տոնապետյանը համոզվում է, թե որքան մեծ էր Ծատուրյանի հմայքը և հեղինակությունը այդ շրջանակներում։ Դիրքով ու տարիքով նրանից բարձր անձինք Ծատուրյանի հետ վարվում էին մեծագույն հարգանքով, իսկ Ծատուրյանն իր հերթին՝ իր փոխհարաբերությունների մեջ ազատ էր և անկաշկանդ՝ «ոչ թե դրդված անձնական հպարտությունից, այլ հայտնապես ընկերական կյանքի ընտելությունից նոցա հետ»։

Ծատուրյանը Տոնապետյանին հանձնարարում է Պետերբուրգից իր հետ բերել թատերական զգեստներ, որոնք հարկավոր էին հայ ուսանողներին՝ նրանց տարեկան ներկայացումների համար։ Այդ հանձնարարությունը կատարվում է։ Ծատուրյանին նրա բարեկամը գտնում է փորձի ժամանակ, թատերասրահում, ուսանողներով շրջապատված։ «Ըստ երևույթին Ծատուրը ուսանողական այդ թատերական ներկայացման կազմակերպության եռանդուն գործիչներից և հաջողացման ոգիներից մեկն էր... Տեսնում էի նրան ուսանողների խումբի մեջ իր եռանդը և ոգին դրած նոցա ցանկալի հանդեսի հաջողության համար»[9]։

Պետերբուրգից Կ. Պոլիս վերադառնալուց երկուս և կես ամիս անց Տոնապետյանը ձերբակալվում է։ Նրա գրքերը և թղթերը բռնագրավվում են։ Հարցաքննության ժամանակ ոստիկանության նախարար Նազրմ բեյը Տոնապետյանի գրքերից մեկի արանքից հանում է մի ծրար... Դա Ալոյանին ուղղված նամակն էր՝ «Գալուստ Ալոյանին, Կովկաս, Ջինագործարան, Թիֆլիս» հասցեով։ Տոնապետյանն այդ նամակը հասցեագրել, բայց դեռ չէր ուղարկել։

---

7 Նույն տեղում, էջ 376։
8 Նույն տեղում, էջ 378։
9 Նույն տեղում, էջ 391։

գտնվում էր Ծատուրյանի բանաստեղծությունների նոր հրատարակության մեջ, որը Տոնապետյանը ստացել էր նախօրյակին։ Այդ պահին նրան շատ խորհրդանշող է թվում մի երևույթ. «Միտքս ավելի պտտում էր, թե ինչ զարմանալի զուգադիպություն, որ այդ ձերբակալման ճակատագրի մեջ այժմ Ալոյան, իրեն ուղղած վտանգավոր նամակով, և Ծատուրյան, յուր բանաստեղծության գրքով, միանում էին ինձ, որոնց հետ ինը տարի առաջ ուխտել էինք սովորել զինագործություն, թրքահայությունը փրկելու համար սուլթանի լուծից»[10]։

Աքիայի բերդում Տոնապետյանը պահվում է 1892-ից մինչև 1896 թ.։ Իբրև ծանր հանցավորի՝ 1895-ի ներումը չի տարածվում նրա վրա։ Տոնապետյանի բարեկամները խորապես մտահոգված էին Աքիայի բանտարկյալի բախտով։ Ալեքսանդր Ծատուրյանը 1894 թ. մի նամակով դիմում է Նոր Նախիջևանում գտնվող իր բարեկամ Մինաս Բերբերյանին. «Երեկ Տոնապետից մի երկար նամակ ստացա։ Մանրամասն նկարագրում է Աքիայի բանտերը և բանտարկյալներին։ Եթե իմանամ, որ այդտեղ հետաքրքրություն կպատճառե, կուղարկեի, որ կարդայիր ծանոթներիդ շրջանում։ Գուցե, մի քանի կոպեկ էլ հավաքեիր խեղճի համար»[11]։ Հավանաբար, նա գործի է դնում նաև Մոսկվայի մտավորականությանը, որովհետև այնուամենայնիվ օգնության է հասնում իր բարեկամին։ Տոնապետյանը պատմում է, որ 1895-ին, Հայֆայի ռուսական հյուպատոսական գործակալի միջոցով մի քրիստոնյա արաբ նրան է հասցնում մի նամակ և դրամական գումար. «Նամակը Մոսկվայից՝ Ծատուրյանից էր։ Արտաքին աշխարհից նամակ գրեթե չէի ստանում տարիներից ի վեր և այդ նամակը ամենաքաղցր հիշատակներով լի մի ընկերից, երկնային մի գանձ թվեցավ ինձ։ Հայտնում էր, թե իրենք ամենքը մտածում էին իմ վրա և ասում էր, որ գրեի իրեն և գրեի մեր փոխադարձ ծանոթ, Մոսկվայի հայ տպարանատեր Մկրտիչ Բարխուդարյանի հասցեին։ Մեծ երջանկություն և մխիթարություն էր ինձ համար խորհիլ, թե կային մտածողներ իմ վրա»[12]։

Երբ Ծատուրյանը արտասահմանյան թերթերից մեկում կարդում է Տոնապետյանի փախուստի լուրը, հանձնարարում է Փարիզում գտնվող Մինաս Բերբերյանին՝ իսկույն մեկնել Լոնդոն և նրան ողջունել Մոսկվայի բարեկամների կողմից։ Այդ հանդիպումը շատ է հուզում Տոնապետյանին։ Ի դեպ Բերբերյանը նրան պատմում է, որ մոտ անցյալում „Правительственный вестник“ թերթում կարդալով մի հաղորդում այն մասին, թե իբր Տոնապետյանը վախճանվել է Աքիայի բանտում, Մոսկվայի նրա բարեկամները հանդիսավոր հոգեհանգիստ են կատարել տալիս Մոսկվայի եկեղեցում։

Իր երախտագիտության զգացումները Մոսկվայի ընկերներին Տոնապետյանը կարողանում է հայտնել միայն 1903 թ. սեպտեմբերին, էջմիածնից դարձի ճանապարհին։ Կրկին հանդիպումներ, խնջույքներ... Ծատուրյանի հայացքների մեջ կատարված արմատական շրջադարձը շատ ակներև էր։ «Այս անդամի այցելության ընթացքում,— գրում է Տոնապետյանը,— նկատեցի, թե Ծատուրյանի գործունեության ձգտումը տարածվել էր զուտ հայկական կյանքի շրջանակից դեպի համընկերային քաղաքական հեղաշրջման գործու-

10 Նույն տեղում, էջ 394։

11 «Գրական ժառանգություն», առաջին գիրք, Երևան, 1940, էջ 627։

12 Պետրոս Տոնապետյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 394—95։

նեության շրջանակը։ Հակապետական զգացումը, որ տասնյակ տարիներից ի վեր աստիճանաբար զարգանում էր ընդհանուր Ռուսիո մեջ ավելի երկչոտ և գաղտնի շարժումներով, այժմ ըստ երևույթին սկսել էր զգացվել ավելի ընդարձակ և նվազ վախկոտ շարժումներով։ Ծատուրյանը դառել էր անդամ այդպիսի գաղտնի կուսակցություններից մեկին. հայտնեց, թե շատ պիտի փափագեր, որ ներկա լինեի իրենց ժողովներից մեկին, բայց այդ գրեթե անկարելի էր։ Ես, որ չափազանց զգուշավոր եմ եղած հարցումներով գաղտնիք նրկատված բաներ ձեռք բերել ուրիշներից, չուզեցի հարցնել, թե ի՞նչ էր իրենց ընկերության ծրագիրը և նպատակը։ Բայց այնքանը տեսնում էի, որ ոգևորությունը մեծ էր յուր մեջ այդ նոր ասպարեզի սիրով»[13]։

Հաշորդ և վերջին հանդիպումը կայանում է 1911 թ. հոկտեմբերին, երբ Տոնապետյանը իբրև Եվրոպայի բոլոր հայ գաղութների պատգամավոր գալիս է էջմիածին՝ մասնակցելու կաթողիկոսական ընտրություններին։ Վերադարձին նա կրկին կանգ է առնում Մոսկվայում։ Խալաթյանը ծանր հիվանդ էր, խորացել էր և Ծատուրյանի հիվանդությունը։ Տոնապետյանը պատմում է այն անսահման հոգատարության և անձնվեր սիրո արտահայտությունների մասին, որոնցով շրջապատել էր հիվանդ բանաստեղծին նրա կինը։

Հայտնի է, որ Ծատուրյանը 1917 թ., մահվանից մի փոքր առաջ, մեկնում է Թիֆլիս։ Այդ առթիվ Տոնապետյանը գրում է. «Նա ապրեց և տեսավ ցարիզմի բռնակալության խորտակումը, որպիսի նպատակի համար տեսա, որ 1911-ին և թերևս նրանից առաջ մտել էր գաղտնի կուսակցության մեջ»։ Թիֆլիսում Ծատուրյանը ջերմ ընդունելություն է գտնում. «Նա ոչ միայն ծանոթ էր հայ մտավորականության, այլ նույնպես վրացի մտավորականության, որոնց լեզուն հայերենի չափ լավ գիտեր։ Երբ մոտ 35 տարի առաջ Թիֆլիսից մեկնեց Մոսկվա, նա մի աղքատ, անծանոթ և աննշան էակ էր և երբ քաղաքական ազատագրության այդ շրջանին հասավ Թիֆլիս, յուր քաղաքացիները ցույցերով և ոգևորությամբ դիմավորեցին նրա մուտքը և ի նշան իրենց հիացման՝ քաղաքի փողոցներից մեկի անունը դրին «Ծատուրյան փողոց»։

Այդ պատվին արժանացած ժամանակ երևի մտաբերեց յուր պատանեկության կյանքը Թիֆլիսում և յուր համեստ գետնահարկ սենյակը Կուրի ափերին մոտ տարածված խարխուլ տուներով թաղում։ Վրաստանի մայրաքաղաքը յուր հարգանքը ցույց տվեց հայ բանաստեղծին յուր կենդանության օրով»[14]։

* * *

Ինչպես յուրաքանչյուր հուշագրություն, Ալ. Ծատուրյանին նվիրված սույն աշխատությունը ևս աչքի է ընկնում ինտիմ տրամադրությամբ և հեղինակի զեղումներով։ Մի բան անկասկած է սակայն, որ Տոնապետյանն անկեղծ է իր զգացումների մեջ և նրա հուշերն իսկապես ստեղծում են բանաստեղծի քնարական կերպարը՝ նրա կյանքի բոլոր տասնամյակներում։ Հասկանալի է, իհարկե, որ Տոնապետյանի հուշերի արժեքը չի որոշվում միմիայն նրանով, թե ինչպիսին է ստացվել բանաստեղծի կերպարը։ Դա հարցի մեկ կողմն

13 Նույն տեղում, էջ 397։
14 Նույն տեղում, էջ 400—401։

է։ Բանասիրության համար առավել արժեքավոր են այն նոր փաստերը, որոնք կօգնեն նոր լույսի տակ տեսնելու բանաստեղծի գաղափարական հասունացման և հետագա տարիների գործունեության ընթացքը։

Մեր կարծիքով Մատուրյանի կենսագրության համար հետաքրքրական նորություն պետք է համարել Թիֆլիսի շրջանի նրա հափշտակվածությունը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարներով։ Ուշագրավ են նաև Տոնապետյան-ժամանակակցի դիտողությունները Մատուրյանի գաղափարական էվոլյուցիայի մասին։ Ռուսական հեղափոխական շարժման նկատմամբ նրա ունեցած համակրանքների, այլև գաղտնի կուսակցական աշխատանքների մեջ ներգրավված լինելու մասին արված Տոնապետյանի հիշատակությունները թեև կարոտ են հիմնավորման, բայց արժեքավոր են հենց նրանով, որ նոր հունի մեջ կարող են դնել մեր գրականագետների՝ Ալ. Մատուրյանի շուրջը կատարվող հետազոտական աշխատանքները։

Ձեռնարկելով սույն աշխատության այլ առանձնահատկությունների վերա, որոնց վերլուծությունը թողնում ենք մատուրյանագետներին, կուզեինք կանգ առնել առերևույթ աննշան թվացող մի փաստի վրա։ Հայտնի է, որ Մատուրյանը Ժամհարյանի բանկում աշխատանքի է անցել 1889 թ. աշնանը։ Երկու տարի անց, 1891-ի դեկտեմբերին, Տոնապետյանը Ժամհարյանի տանը անձամբ համոզվում է, թե որքան բարյացակամ էր տանտերը իր երիտասարդ աշխատակցի նկատմամբ և թե ինչպես էր սիրաշահում նրան։ Ուրեմն ի՞նչն է ստիպում նրան՝ 1893-ի սեպտեմբերին վտարել Մատուրյանին աշխատանքից։ Բանաստեղծի կենսագիրները իրավացիորեն այդ բացատրում են նրա գործունեության դեմոկրատական միտվածությամբ։ Ինքը Մատուրյանը նույնպես մի բանաստեղծության մեջ ակնարկում է, որ իրեն հալածում են ճշմարտության գաղափարի համար։ Ընդունելով հանդերձ այս ամենը, ենթադրում ենք, թե Մատուրյանի և Ժամհարյանի փոխհարաբերությունների վատացման գործում կարող էր որոշակի դեր կատարել նաև այն փաստը, որ բանաստեղծը ինքնամոռացության աստիճան սիրահարված էր տիկին Ժամհարյանին։ Տոնապետյանը պատմում է, որ Ժամհարյանի տանն անցկացրած հիշարժան երեկոյից հետո, երբ իրենք տուն են վերադառնում, Մատուրյանը բացում է իր սրտի գաղտնիքը։ «Խոստովանվեց, թե խենթի պես սիրահարված էր Ժամհարյանի քնքուշ կնոջ վրա, և թե յուր սիրային բանաստեղծությունները նվիրված էին այն հուսավետ և անհույս երազներից, որ ցերեկվա լույսի և գիշերային մթության մեջ երազում էր այդ գեղուհիի մասին»[15]։ Տվյալ դեպքում Մատուրյանի սիրո պատմության հայտնությունը հետաքրքրական է ոչ այնքան նրա և Ժամհարյան ընտանիքի փոխհարաբերությունները պարզելու, որքան նրա սիրային լիրիկայի ներշնչանքի աղբյուրը ճանաչելու առումով։

Տոնապետյանի հուշերը, եթե նույնիսկ միայն լուսաբանելու լինեին գրքի հեղինակի և Մատուրյանի բարեկամության սրտառուչ պատմությունը, դարձյալ արժանի կլինեին այն բանին, որ մեր բանասերները լուրջ ուշադրություն նվիրեին դրան։

Մի քանի խոսք Տոնապետյանի մեմուարների վերջաբանի մասին։ Հեղինակը իր գրքի փոքրիկ վերջաբանում կրկին անդրադառնալով այն իրողությանը, որ Ալ. Մատուրյանի մասին գրած իր հուշերը, ժամանակին թերանալով

15 Նույն տեղում, էջ 378։

ուղարկել Երևանի թանգարանին, այժմ շաղկապում է իր կյանքի պատմությունը, բարի խոսքով է հիշում գրականագետ Խորեն Սարգսյանին։ «Խորեն Սարգսյանի խնդրանքն էր, որ ես դրի առնեի իմ պատանեկության սիրելի ընկերոջ և պատանի Հայաստանի սիրեցյալ բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանի կյանքի ստվերագծերից ինչ որ գիտեի, թանգարանի համար։

Հավանորեն նա այժմ այնտեղ չէ, բայց նրա միտքը և սիրտը անտարակույս այնտեղ են. և եթե նրա կյանքը բաժանված չէ այս աշխարհից, նրա կենդանի աչքերը պիտի տեսնեն այս նամակս սույն գրքում, որ ինչպես իրեն համար էր, նույնպես և է՛ իրեն նմանների համար»[16]։

Պետք է արժանին հատուցել վաստակաշատ հայ գիտնական հանգուցյալ Խորեն Սարգսյանին, նրա հեռատեսությանը, շրջահայեցությանը, պրպտող մտքին։ Ալեքսանդր Ծատուրյանի մասին այս մեծարժեք հուշագրության ասպարեզ գալով մենք պարտական ենք նրա հայրենանվեր գործունեությանը։

АЛЕКСАНДР ЦАТУРЯН В ВОСПОМИНАНИЯХ СОВРЕМЕННИКА

МАРГО МХИТАРЯН

Резюме

Настоящее сообщение имеет целью ознакомить читателя с мемуарами П. Тонапетяна «Армения и армянский народ через века» (т. I, Детство и отрочество, Париж, 1947), содержащими отдельную главу об армянском поэте Ал. Цатуряне. Автор мемуаров—современник и друг поэта, его товарищ по учебе.

В указанной главе находим богатый фактический материал о жизни и деятельности поэта. Для армянской филологической науки значительную ценность могут представить в частности, следующие данные:

а) В молодости Ал. Цатурян увлекался идеями национально-освободительной борьбы армянского народа. С группой товарищей он дал клятву посвятить себя делу освобождения Западной Армении от османского ига, поступил в Тифлисскую ремесленную школу, чтобы изучить оружейное дело (1883—1884 гг.).

б) П. Тонапетян показывает эволюцию идейных позиций поэта. Живя в Москве (1888—1917 гг.), он был связан с политическими событиями России. По утверждению автора мемуаров, Ал. Цатурян в Москве состоял членом нелегальной партийной организации и был увлечен политической борьбой против царизма.

в) Лирический облик поэта, его щедрая душа в воспоминаниях вырисовываются с новой стороны на фоне общественно-политической жизни армянской колонии в Москве.

г) Впервые упоминается об интимных переживаниях поэта, выявляются истоки его творческого вдохновения, указывается личность, которой посвящались его лирические стихи конца 80-ых — середины 90-ых годов.

---

16 Նույն տեղում, էջ 443։